ԹԷՈԿՐԻՏԵԱՅ ԳԵՂՕՆՔ

(Տես երես 132։)

ԳԵՂՕՆ Դ

ՊԱՏՃԱՌՔ

Հովուական է գեղօնս։ Բատտոս այծարած և Կորիդոն եզնողն խօսին ընդ միմեանս։ Մուծանէ Թէոկրիտոս զԿորիդոն՝ զՀովիւ եզանցն տուարածի ուրումն Էգոնայ․ զորմէ և ասէ իսկ՝ առ քաջութեանն ածեալ 'ի Միլոնէ մրցողէ 'ի հանդէս խաղուց ըմբշամարտութեան։ Տեսարանդ է 'ի կրոտոն իտալիացւոց։

ԲԱՏՏՈՍ ԵՒ ԿՈՐԻԴՈՆ

Բատտոս

Ասա ինձ, ո՛ Կորիդոն, ո՞յր են անդեայդ, Փիլոնդեա՞յ.

Կորիդոն

Ո՛չ իսկ, այլ Էգոնեայ. և ինձ եթող արածել.

Բատտոս

Մի՞ զընաւս լռելեայն կթեսցես դու ընդ երեկս.

Կորիդոն

Զի և ծերն արձակէ զորթս մարցն, և ուշով մընայ ինձ։

Բատտոս

Այլ յո՞ ինքն ուրեք չոգաւ հովիւն եզանց լռելեայն։

Կորիդոն

Ո՞չ լըւար, զի յԱլփէոս ըզնա առեալ ած Միլոն։

Բատտոս

Ե՞րբ ապա յականիցէ նա զիւղն յաչաց իւր 'ի բիբս [1]։

1. Իւղն աստ Թուի նշանակել զօծումն ըմբշամարտաց յառաջ քան զկռիւն։

digitised by A.R.A.R.@

Կորիդոն

Զի ուժով՝ ընդ Հերակլեայ ասեն ընդ նա ոգորել։

Բատտոս

Այլ և զիս մայրն իմ ասէր զՊողիտեւկեաւ գըլեւլ յաղթ։

Կորիդոն

Այլ գընաց բրիչ 'ի ձեռին, և ոչխարակք քըսան մի.

Բատտոս

Զի Միլոն հաւանեցոյց, եթէ մոլեալ իցեն գայլք.

Կորիդոն

Եւ ընջուզք ըղձեա նորա բըչեն մընչեն կաթողին.

Բատտոս

Եղո՜ւկ և վայ է նոցա՝ զի տըւարած գըտին չար.

Կորիդոն

Եղկելիք իսկ արդարև, և ոչ սիրեն զարօտս այլ.

Բատտոս

Զի տըրմուղ այդ երընջոյն ոչ այլ մընայ ինչ յիրանն՝
Բայց ոսկր. ո՞չ շաղ ցօղոյ կերիցէ զայդ զերդ ճըպուռն։

Կորիդոն

Ո՛չ, արդարև. երբեմն ընդ նա հանեմ յարօտ յէսարոն,
Եւ զկակուղ դալարուդ խըրձունս պարարտ տամ նըմա,
Այլ երբեմն ոստնու տրոփէ ընթաւախիտ Լատիմնեաւ։

Բատտոս

Զի վտիտ է ցուլն խարտեաշ, իցէ՝ նըմին վիճակէր
Ժողովուրդ Լամպրիադեան՝ զի Հերայի հանցեն ձօն,
Զի ամբոխն այն խաժամուժ չըքաւորեալ տըւայտի։

Կորիդոն

Ապաքէն 'ի ծագս ճահճայ և 'ի փիւսկոս արշաւէ,
Ու 'ի Նիեեթոս, ուր բոյսք չըքնաղ բազմապատիկ քուսանին,
Հաճար և դըժնիկ և քաղցրահոտ թըրընջխոտ [1].

1. Թրնջխոտ, այսպէս կոչեն բժշկարանք մեր զMélisse, յն. μελίτεια.

digitised by A.R.A.R.@

Բատտոս

Վա՜յ, վա՜յ, գնացեն անդեայքդ, չըւառական դու Էգոն,
Ի Դըժոխս, զի չարաշուք անձնչաս փառաց յաղթութեան.
Եւ սըրինգ՝ քոյդ ձեռագործ՝ հարցի 'ի ցեց մեցամէս։

Կորիդոն

Ո՛չ այսպէս, աստուածա՛մք, այլ ընդ երթալն 'ի Պիսա՝
Զայն՝ պարգև եթող առ իս. զի եմ և ես երգեցիկ,
Քանզի քաջ ըզԳլաւկեայն ոգեմ, քաջիկ և զՊիւրրեայ.
Ըզհըրոտոն գըրուատեցից. Զակինթ քաղաք հոյակապ,
Լակինիոն արևելեան, ուր մըրցական գոռն ըմբիշ
Ինքն Էգոն՝ ութսուն միայն լափեաց եկեր պըլակունդս.
Եւ անդէն ըզկըճղակաց ածեալ ցուլ մի 'ի լեռնէն՝
Ետ 'ի ձիր Ամարիլլեայ. միահամուռ անդ կանայք
Մեծածափ հանէին նըւագս, իսկ տըւարածն քըրքջէր մեծ։

Բատտոս

Ո՛վ քաղցր Ամարիլլիս, ո՛չ մահն ինքնի՛ն տացէ զքեզ
Մոռանալ. այնպէս չիջար՝ որպէս սիրուն իմ այծիք.
Վա՜հ, եղո՜ւկ խիստ հրամանաց ճակատագրի՝ զոր կրեցիս։

Կորիդոն

Քաջանալ պարտ է, Բատտոս, լիցի թերևս վաղիւ դիւր,
Զի յոյսք առ կենդանեօք, և անյոյսք են՝ որ մեռանին.
Զի և Զևս, է՝ զի յըստակ, է՝ զի երբեմն անձրևէ։

Բատտոս

Համպա արդ, ըզզուարակս իջի 'ի վայր, զի զըննձիւղս
Ձձիթենւոյ ճարակեսցին։ Սպիտակակիզն, համպա եղթ.

Կորիդոն

Համպա եղթ, դու Կիմէթա, ընթա՛ 'ի բլուրն, չըլըսես.
Գայցեմ՝ հա՛, երդուեալ 'ի Պան, չարիս ընդ քեզ անցուցից՝
Թէ ոչ աստի մեկնեսցիս. տես թէ զիա՛րդ այսըր դայ.
Ո՛հ, էր ինձ բիր կորածայր՝ 'ի հարկանել ինձ ըզքեզ։

Բատտոս

Տե՛ս զիս, ո՛վ Կորիդո՛ն, Արամազդաւ. զի սատակ
Փըշալից մըխեցաւ աստ ոտից իմոց ընդ ներքանս,
Զի՛ տատասկըդ են խորարմատք, ուր չարաչար կորիցէ

digitised by A.R.A.R.@

Երինջն այն․ ցանկամ՝ ահա զնորայն կորուստ, տեսանես։

Կորիդոն

Այո, այո․ 'ի ճիրանունս ըղձա ունիմ, ահա նա․

Բատտոս

Զի՞ զոյգն է վիրիդ հարուած, այլ զորպիսի՞ ընկճէ այր։

Կորիդոն

Ի լեառն եթէ երթաս, Բատտէ, բոկոտն գայցես մի,
Զի լերինս փուշ և դըժնիկք մացառամոլ բուսեալ կան։

Բատտոս

Աղէ ասա, Կորիդոն, իցէ դեռ ողջ ծերունին
Որ մըրրայօն տարփածուին 'ի սէր հարեալ մոլեցաւ։

Կորիդոն

Դեռ այն ինչ, չարաճըճիդ, հազիւ եկեալ նա այսրէն՝
Տեսի զնա առ փարախաւն՝ զի զարուեստին իւրով գայր․

Բատտոս

Քաջ է, այր չարախտավատ․ զի ազգըդ քո և սերունդ՝
Մըրցեսցի 'նդ այծամարդաց և ընդ Պանեայց փայտոտանց։

Թարգմ. Հ. Ա. ՍՈՒՔՐԵԱՆ

ԵՍՔԻԼՈՍ

Եսքիլոս ողբերգական քերթողութեանն առաջին հնարագիտ յելլենացւոց, էր յազգէ Աթենացի, յԷլեւսինեայ տոհմէ, ժամանակակից Պինդարու՝ պարագլխի քնարերգական բանաստեղծութեանց։ Քաջ իսկ և արի ասի լինել 'ի մարտս, զի գտաւ և 'ի մարաթոնական գուպարածին ընդ եղբօր իւրում, և 'ի Սալամինայ նաւամարտութեան և 'ի պղատէական հետևակամարտութեան։ Իսկ 'ի քերթողութեան ախորժէ մանաւանդ զպաճուճաբան ոճս, զնմանաձայնութիւնս և զցիցադէզ մակադիրս անուանց և բառից, զայլաբանութիւնս, և համայն ասել, զուառցիկ և զսեթևեթեալ բանս։ Այլ և այսու ամենայնիւ, բազում ինչ գեղեցկութիւնք նշմարին 'ի նորին քերթուածս, և առաւել ծանրութիւն։ Ի բազում ողբերգութեանց սորա մի է և առաջիկայս, որ կոչի Պռոմեթեւս կապանաւոր կամ

digitised by A.R.A.R.@